ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հոկտեմբերի 2021թ. N 649/Ա

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 04/Մ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N780-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 3-րդ բաժնի 15-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել

1) Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմամշակութային հուշարձանների գիտամեթոդական խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմամշակութային հուշարձանների գիտամեթոդական խորհրդի կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2.Ուժը կարցրած ճանաճել Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի 2020թ. մարտի 11-ի N04/Մ հրամանը:

Լ.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Հավելված N 1
ԱՀ կթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«23» դեկտեմբերի 2021թ. N 648/Ա հրամանի

Գայանե Գրիգորյան - Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ- խորհրդի նախագահ:

Արման Գրիգորյան – Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի վարիչ- խորհրդի նախագահի տեղակալ:

Լուսինե Ավանեսյան - Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ- խորհրդի քարտուղար:

Մելանյա Բալայան - Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական, պատմական գիտությունների թեկնածու- խորհրդի անդամ:

Իգոր Թևոսյան- Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի գլխավոր մասնագետ- խորհրդի անդամ:

Կարեն Ավագյան - Արցախի հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի գլխավոր մասնագետ- խորհրդի անդամ:

Աշոտ Սարգսյան- Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի, մշակույթի և երիտասարդության հարցերի վարչության կրոնի և ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ- խորհրդի անդամ:

Սլավա Սարգսյան - Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն, խորհրդի անդամ:

Հավելված N 2
ԱՀ կթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«23» նոյեմբերի 2021թ. N 688Ա հրամանի

ԿԱՐԳ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կարգով սահմանվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պատմամշակութային հուշարձանների գիտամեթոդական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) ստեղծման, նրա գործառույթների, աշխատանքների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2.Խորհուրդը ստեղծվում է և նրա անհատական կազմը հաստատվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 278 որոշմամբ հաստատված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգի 76-րդ կետի:

3.Խորհուրդը հուշարձանների հետազոտման, պահպանության, վերականգնման և օգտագործման բնագավառների առավել փորձառու մասնագետներից բաղկացած, առնվազն 7 անդամ ունեցող խորհրդակցական մարմին է:

4.Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել շահագրգիռ պետական մարմինների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, մշակույթի բնագավառի գործիչներ, փորձագետներ, վերականգնող ճարտարապետներ՝ որոնց մի մասը կարող են ընդգրկված լինեն Հայաստանի Հանրապետությունից: Հայաստանի Հանրապետությունից ընդգրկված մասնագետները նիստին կարող են մասնակցել առցանց,անհրաժեշտության դեպքերում կարող են հրավիրվել հարցերին կենդանի քննարկման նպատակով:

5.Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 23-ի N 278 որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

6.Խորհրդի գործունեությունը կարող է դադարեցվել կամ կազմի փոփոխություն կատարվել նախարարի հրամանով:

II. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7.Խորհուրդը քննարկում և մասնագիտական եզրակացություն է տալիս՝

1) հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և հատուկ նորմերի, մեթոդների և տեխնոլոգիական պահանջների մշակման և ներդրման վերաբերյալ,

2) հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման նախագծային առաջադրանքների, նախագծերի և դրանց գիտական հիմնավորման և առաջարկությունների վերաբերյալ,

3) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գիտատեխնիկական և գիտահանրամատչելի գրականության և հուշարձանների տարեգրքի հրատարակման վերաբերյալ,

4) հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման բնագավառի այլ հարցերի վերաբերյալ:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8.Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են նախարարի կամ խորհրդի նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության:

9.Խորհուրդը կազմված է խորհրդի նախագահից և անդամներից:

10.Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

11.Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

12.Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում նիստերը վարում է խորհրդի նախագահի տեղակալը:

13.Խորհրդի նիստին մասնակցելու համար անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև համապատասխան ոլորտների մասնագետներ:

14.Խորհրդի եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում վճռորոշ է նիստը վարողի ձայնը: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

15.Խորհրդի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ հատուկ կարծիքներն ընդունվում են գրավոր և կցվում արձանագրությանը:

IV. ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

16.Գիտամեթոդական խորհրդի օրակարգը ձևավորվում է նախարարության աշխատակազմի ներկայացված հայտերի հիման վրա: Օրակարգի նախագիծը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնի պետի կողմից զեկուցագրով ներկայացվում է նախարարի համաձայնեցմանը: Նախարարի համաձայնեցումից հետո ձևավորվում է օրակարգը և տրվում խորհրդի նիստի քարտուղարին:

17.Խորհրդի նիստ հրավիրելու դեպքում նախարարի կամ խորհրդի նախագահի հանձնարարությամբ խորհրդի քարտուղարը նիստի հրավիրման

օրվանից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ խորհրդի անդամներին իրազեկում է խորհրդի նիստի հրավիրման, տեղի, ժամանակի մասին՝ նրանց առաքելով նիստի օրակարգը և համապատասխան նյութերը (ընտրված մեթոդի գիտական հիմնավորումը գրավոր և հիմնական գծագրերի էլեկտրոնային տարբերակը), որոնք հասցեատիրոջը տրամադրվում են առձեռն կամ էլեկտրոնային փոստի կամ ֆիքսիմիլային կապի միջոցով:

18.Խորհրդի նիստի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,

2) քննարկման ենթակա հարցերը,

3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի և փորձագետի անունը, ազգանունը:

4) Խորհրդի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է նախարարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնաիրման, պահպանման և վերականգնման բաժնի պետը:

V. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

19.Խորհրդի նիստերի արձանագրումն ապահովում է խորհրդի քարտուղարը:

20.Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը,

2) նիստի օրակարգը,

3)նիստին մասնակցող, հրավիրված անձանց անունը, ազգանունը,

4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները,

5) ընդունված եզրակացությունները:

21.Խորհրդի նիստի արձանագրությունները ստորագրում են խորհրդի նախագահը (բացակայության դեպքում՝ խորհրդի նախագահի տեղակալը) և խորհրդի քարտուղարը:

22.Խորհրդի քարտուղարը նիստից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում նիստի արձանագրությունը ներկայացնում է խորհրդի նախագահի (բացակայության դեպքում՝ խորհրդի նախագահի տեղակալի) ստորագրմանը: Խորհրդի նիստի նախագահը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունը կամ վերադարձնում է խմբագրման խորհրդի նիստի քարտուղարին: Խորհրդի նիստի քարտուղարը խմբագրման վերադարձված արձանագրությունը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում խմբագրում և ներկայացնում է խորհրդի նախագահի ստորագրմանը: Խորհրդի նախագահը ստորագրելուց հետո նույն օրը ստորագրված արձանագրությունը ներկայացնում է նախարարին:

23.Խորհրդի նիստերի արձանագրությունները պահվում են նախարարության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, պահպանման և վերականգնման բաժնում:

VI. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24.Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում, նախագահում և վարում է խորհրդի նիստերը,

2) հաստատում է խորհրդի օրակարգը և ստորագրում խորհրդի նիստերի արձանագրություններն ու քաղվածքները,

3) որոշում է խորհրդի նիստերին հրավիրվող անձանց կազմը (որոնք քվեարկությանը չեն մասնակցում),

4) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ,

5) տարեկան հաշվետվություն է ներկայացնում նախարարին խորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ,

25.Խորհրդի քարտուղարը՝

1) ապահովում է խորհրդի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը,

2) ապահովում է խորհրդի նիստերի արձանագրության կազմը,

3) ապահովում է խորհրդի գործունեության մասին տեղեկատվության տարածումը,

4) խորհրդի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

26.Խորհրդի անդամը՝

1) մասնակցում է խորհրդի նիստերին,

2) մասնակցում է եզրակացությունների ընդունման համար քվեարկությանը,

3) հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ կարող է ներկայացնել բանավոր կամ գրավոր կարծիք,

4) խորհրդի կողմից տրված կարծիքի, եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում կարող է գրավոր ներկայացնել իր հատուկ կարծիքը:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Շ. ՍԱՐԳՍՅԱՆ